

տինոս, Զիթենեաց լերան մէկ վանականը (Ե. դար), Պոստրայի եպոս. Տիտոսի (Ե-Ձ դար) մեկնութիւնները, Պատկառելին Բեդ և ուրիշներ 60 ասպարէզով եմամաւուսին ի նպաստ կ'արտայայտուին: 1059 ին Գէորգ Կեդրենոս եմամաւուս-Նիկոպոլիս ֆաղափին վրայ խօսելէ յետոյ, 387 ին Պաղեստինի եմամաւուս գիւղին մէջ պատահած դէպք մը կը պատմէ: Ս. Ղուկասի եմամաւուսը ուրեմն տեսութենէ չէ վրիպած, և դարձեալ կ'երեւնայ իբր գիւղ, Դ. դարէն սկսեալ:

1099 ին Սաչակիրները Լիւզէն Պէյք Նուպայի ճամբով հասան եմամաւուս: Այդ տեղը իրապէս Քուլէպէի եմամաւուսն է: Այստեղ անոնք հանդիպեցան առատաջուր և քաղցրահամ աղբիւրի մը: Տեղացիք կը կոչեն զայն Այն Անապ, հրաշալի աղբիւր: Նոյն տեղն իսկ, Փրանկները հանդիպեցան աւերակ հին սրբավայրի մը որ կը բովանդակէր հրէական տուն մը: Տեղացի քրիստոնեաները անոնց սորվեցուցին թէ այս այն տեղն էր՝ ուր Յիսուս իր երկու աշակերտներուն յայտնուած էր, Ս. Ղուկասի եմամաւուսը:

ԺԴ-ԺԶ դար, այլ և այլ ուղեգիր-ուխտաւորներ հանդիպած են այս գիւղը, բայց աւերակ գտած են եկեղեցին, եւ գիւղն ալ ամայացած. արաբներ կը բնակէին հոս, և գիւղն ալ կ'անուանէին «Քուլէպէ»: Clermont-Ganneau գիտել կուտայ թէ Միջին դարուն, Ժողովուրդներու գաղթականութեան հետ, տեղի ունեցած է նաև տեղերու անուններու գաղթականութիւն մը. օրինակի համար, Պէյք Իֆսա, 6 քիլոմէր դէպի հարաւային արևելք. եմամաւուս-Քուլէպէ, երբեմն կը կոչուէր Իււնի կ'էրա...:

Երևանուսի եկեղեցին. — Աւանդութեան ամենէն